Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Սեպտեմբեր

թիվ 9 (181)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի լիցենզիան վերաձևակերպելու և «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ի ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները որոշ ՓԲԸ-ների «ՀոմՍենդ» և «Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու, «Գրանատուս Վենչուր ֆոնդ I» ՓԲԸ ներդրումային ֆոնդը գրանցելու, ինչպես նաև «Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Բանգլադեշ» մասնաճյուղը գրանցումից հանելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ապահովագրական ՓԲԸ-ի և 3 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 209-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3 պաշտոնական պարզաբանումը «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ ֆոնդերի, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ֆոնդերի թողարկած արժեթղթերում ներդնելու վերաբերյալ»

9 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.5% (որոշում թիվ 220Ա):
- ***Վերածնակերպվել է*** «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան՝ ընդգրկելով լրացուցիչ ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիաներ (հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում, իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում) (որոշում թիվ 212Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կասկադ Ինվեստմենտս» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան (որոշում թիվ 213Ա):
- ***«ՀոմՍենդ» և «Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** համապատասխանաբար «ՍոբիԴրամ» և «Անելիք բանկ», «Արցախ բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 217Ա, 218Ա, 219Ա):
- ***Գրանցվել է*** «Գրանատուս Վենչուր ֆոնդ I» փակ բաժնետիրական ընկերություն հաստատուն կապիտալով, ոչ հրապարակային, կորպորատիվ, փակ մասնագիտացված (վենչուրային) ներդրումային ֆոնդը (որոշում թիվ 222Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Բանգլադեշ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/823Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության և 3 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/771Ա, 1826Ա, 1/828Ա, 1/862Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 3-ի 5-րդ կետի 3-րդ պարբերությունում «չվճարված տոկոսագումարը» բառերը փոխարինել «չվճարված կամ չստացված տոկոսագումարը, ինչպես նաև տոկոսային արժեթղթերի զեղչով տրամադրման դեպքում՝ արժեթղթի պայմանների համաձայն հաշվեգրված և չվճարված կամ չստացված զեղչի գումարը» բառերով:
2) Կանոնակարգ 3-ի 10-րդ կետի 2-րդ նախադասությունում «համախառն հաշվեկշռային մնացորդներով» բառերը փոխարինել «Կանոնակարգ 2-ի Հավելված 4-ի 6.3-րդ կետի պահանջներին համապատասխան» բառերով:
3) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 11 հաշվետվության «Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ՝ այդ թվում՝» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ՝ «Գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսեր՝ ըստ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի «թ» ենթակետի»:
4) Կանոնակարգ 3-ի կետ 32-ի 2-րդ ենթակետում «2-րդ,» բառից հետո ավելացնել «3-րդ,» բառը:
5) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 6 հաշվետվության «IV. Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» աղյուսակի «Ամսվա ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ հետևյալ բովանդակությամբ.

Այդ թվում՝	
Ամսվա ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված բլանկային ակտիվներ	
ՀՀ դրամ	արտարժույթ

:

6) Կանոնակարգ 3-ի Չև թիվ 6 հաշվետվության «IV. Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ» աղյուսակի «Ամսվա ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձ» սյունակից հետո լրացնել նոր սյունակ՝ հետևյալ բովանդակությամբ.

Այդ թվում՝	
Ամսվա ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված բլանկային ակտիվների վերադարձ	
ՀՀ դրամ	արտարժույթ

:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 սեպտեմբերի 2013 թ., N 209-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. օգոստոսի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.09.2013 թ. (ՀՀԳՏ N28 (472), 1.10.2013):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել ապահովագրական ընկերությունների նորմատիվների հաշվարկման համակարգում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 3-ի Հաշվետվություն թիվ 3-ի Աղյուսակ 18-ի «Օտարերկրյա կորպորատիվ արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով» սյունակում «արժեքով» բառից հետո լրացնել «, Միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված ոչ պետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով» բառերը:
2) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 9-ի Հաշվետվություն թիվ 9-ի «Ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ (ներառյալ՝ դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ), որոնց որևէ մասը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել է այլ անձանց» տողը փոխարինել «Ապահովագրական ընկերության կողմից վարձակալված կամ անհատույց օգտագործման իրավունքով օգտագործվող հիմնական միջոցների բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումներ» տողով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
4 սեպտեմբերի 2013 թ., N 210-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. օգոստոսի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.09.2013 թ. (ՀՀՊՏ N28 (472), 1.09.2013):

Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ ֆոնդերի, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ֆոնդերի թողարկած արժեթղթերում ներդնելու վերաբերյալ [*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ստացվում են բազմաթիվ հարցումներ, որոնցով խնդրվում է պարզաբանել, թե արդյոք կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի կողմից կառավարվող ֆոնդերի թողարկած արժեթղթերում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) բարձրացված խնդրի տեսանկյունից անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքներին.

1. 2014 թվականի հունվարի 1-ից սկսելու է գործել պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը, որը ենթադրում է օրենքով սահմանված անձանց շրջանակից միջոցների ներգրավում և այդ միջոցների՝ մասնագիտացված անձանց կողմից կառավարում՝ դրանք որոշակի չափանիշների բավարարող ակտիվներում ներդնելու միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական կայունության ապահովումը, որը կարող է իրականացվել նաև կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից ֆոնդի ակտիվների արդյունավետ կառավարման համար համապատասխան պայմաններ ստեղծելով:

3. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կենսաթոշակային ֆոնդի ակտիվները, ի թիվս այլ սահմանափակումների, չեն կարող ներդրվել նաև տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում:

4. Այս տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի կողմից կառավարվող ֆոնդերի թողարկած արժեթղթերում ներդնելու հնարավորությունները:

Վերը նշվածի հիման վրա խորհուրդը գտնում է.

1. Նախ՝ տվյալ դեպքում անհրաժեշտություն է առաջանում քննարկելու փոխկապակցվածություն եզրույթի կիրառելիության հարցը բարձրացված խնդրի շրջանակներում: Այսպես, ֆոնդի թողարկած արժեթղթերում տվյալ ֆոնդի կառավարչի կողմից այլ ֆոնդերի ակտիվների ներդրման տեսանկյունից կառավարչի և ֆոնդի փոխկապակցվածության կիրառելիությունն առկա չէ, քանի որ տվյալ դեպքում փոխկապակցվածության բացահայտման կարևորությունը և տրամաբանական նշանակությունը բացակայում են: Ֆոնդն ընդամենը իրենից ներկայացնում է տարբեր անձանց պատկանող դրամական միջոցների ամբողջություն, և դրա գոյությունն ինքնին չի կարող ավելացված արժեք ստեղծել, եթե այն չունի կառավարիչ: Այսինքն՝ ֆոնդը որպես անձ դիտարկելու նշանակությունը դառնում է ոչ էական: Այն ընդամենը կարելի է դիտարկել որպես գործիք, որի միջոցով կառավարիչը հնարավորություն է ստանում հավաքագրված դրամական միջոցները կառավարելու՝ տարբեր ակտիվներում ներդնելու միջոցով: Ավելին, եթե ֆոնդը հանդես է գալիս որպես պայմանագրային ֆոնդ, վերջինիս անձ լինելու և դրա նկատմամբ փոխկապակցվածություն եզրույթը կիրառելու հնարավորությունն ընդհանրապես բացակայում է: Իսկ ֆոնդերի նկատմամբ տարբեր մոտեցումների կիրառումը՝ կախված այն հանգամանքից, թե տվյալ ֆոնդն իրավաբանական անձ է, թե պայմանագրային ֆոնդ, կհանգեցնի նույնանման գործիքների համար անհավասար պայմանների առաջացման:

Հետևաբար՝ հաշվի առնելով, որ օրենքով սահմանված կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և պահառուի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած արժեթղթերում ներդնելու արգելքն օրենսդիրն ուղղակիորեն կապում է կա՛մ կառավարչի, կա՛մ պահառուի, կա՛մ նրանց հետ փոխկապակցված անձանց հետ, կարելի է փաստել, որ այդ դրույթները չեն տարածվում ֆոնդի վրա, քանի որ այն չի հանդիսանում կառավարչի հետ փոխկապակցված անձ:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. սեպտեմբերի 9-ին (ՀՀԳՏ N 28 (472), 1.10.2013):

2. Օրենքը, սահմանելով կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ ֆոնդի կառավարչի, պահառուի կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկված արժեթղթերում ներդնելու սահմանափակումը, ըստ էության նպատակ է ունեցել զսպելու այնպիսի ռիսկեր, ինչպիսիք են կառավարչի կողմից իր կողմից կառավարվող ֆոնդի ակտիվները տվյալ կառավարչի անձնական շահերի համար օգտագործելը, ինչի արդյունքում կարող են հիմքեր ստեղծվել ֆոնդի մասնակիցների շահերը վտանգելու տեսանկյունից: Մինչդեռ տվյալ կառավարչի այլ ֆոնդերի կամ տվյալ կառավարչի հետ փոխկապակցված անձանց ֆոնդերի կողմից թողարկված արժեթղթերում ներդրում կատարելը չի կարող դիտարկվել որպես կառավարչի անձնական շահ, որը կարող է հանգեցնել ֆոնդի մասնակիցների համար ոչ բարենպաստ հետևանքների առաջացման, քանի որ, ըստ էության, ներդրումային ֆոնդը, որպես արժեթղթերի կառավարվող պորտֆել (տարբեր ֆինանսական և այլ ակտիվների համախումբ), հանդիսանում է ընդամենը միջոց՝ այլ ընկերությունների արժեթղթերում և այլ ակտիվներում դիվերսիֆիկացված ներդրումներ կատարելու համար:

3. Այլ ֆոնդի արժեթղթերում ներդրումների կատարումն էապես նվազեցնում է կենսաթոշակային ֆոնդերի գործարքային ծախսերը՝ թույլ տալով նույն պորտֆելը ձևավորելու փոխարեն ձեռք բերել արդեն իսկ ձևավորված պորտֆելում (ֆոնդում) մասնաբաժին:

Խորհուրդը գտնում է նաև, որ.

Ֆոնդի ակտիվները տվյալ ֆոնդի կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ֆոնդերում ներդնելը պետք է բխի միայն ֆոնդի մասնակիցների լավագույն շահերից և նրանց ներդրումների արդյունավետ կառավարման նպատակից: Միևնույն ժամանակ, ֆոնդի ակտիվները տվյալ ֆոնդի կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ֆոնդերում ներդնելը բխում է նշված նպատակներից, եթե պահպանվում են հետևյալ սկզբունքները.

1) ֆոնդերի ներդրումային քաղաքականություններն էապես տարբերվում են,
2) դրա համար չեն գանձվում փայերի (բաժնետոմսերի) մարման և տեղաբաշխման վճարներ,
3) կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի ակտիվներն իր կողմից կառավարվող մեկ այլ ֆոնդում ներդնելու դեպքում նույն ակտիվները տարբեր ֆոնդերում ներդնելով դրանցից չեն գանձվում կրկնակի պարգևավճարներ,
4) տվյալ ֆոնդի կանոններով նման հնարավորություն նախատեսված է:

Այս սկզբունքների կիրառությունը հիմնավորվում է նաև միջազգային փորձով: Մասնավորապես, նմանատիպ հարաբերությունների կարգավորման շրջանակներում վերը նշված սկզբունքները տեղ են գտել Եվրոպական պառլամենտի և Եվրոպական հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 2009/65/ԵՀ հրահանգում:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝

Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող այլ ֆոնդի թողարկած արժեթղթերում ներդնելու վերաբերյալ ***պաշտոնապես պարզաբանում է.***

Կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել տվյալ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի այլ ֆոնդի, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ֆոնդի թողարկած արժեթղթերում՝ իրավական ակտերով և սույն պաշտոնական պարզաբանմամբ նախատեսված ֆոնդի ակտիվների ներդրման սկզբունքների պահպանմամբ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

12 սեպտեմբերի 2013 թ., N3

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 13

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 16

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 21

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 22

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 32

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 52
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 65
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 67
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 73
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2013թ. օգոստոս*	*2013թ. օգոստոսի իրական աճի ինդեքսը 2012թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2013թ. սեպտեմբեր*	*2013թ. սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	103.3[1]	-	100.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	101106.9	102.9	110464.0	112.7
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	618.1	93.8	571.0	99.5
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	169157.8	111.9	196317.4	101.5
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	198397.4	98.9	212384.0	99.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	37703.4[1]	92.5[1]	50974.6	88.1
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	86367.3	99.3	89049.2	100.4
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	150538[1]	96.7	150130[2]	97.8

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2013 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.9	102.0	100.3	100.1
Փետրվար	99.6	98.4	101.0	100.3
Մարտ	100.4	99.3	97.5	99.6
Ապրիլ	99.9	99.1	101.4	99.1
Մայիս	100.0	100.3	101.7[1]	100.2
Հունիս	99.9	99.8	99.7	96.1
Հուլիս	100.4	100.3	100.0	83.9
Օգոստոս	100.3	100.9	101.3	92.3
Սեպտեմբեր	99.8	103.3	99.0	93.2
2013 թ. հունվար – սեպտեմբերը 2012 թ. հունվար – սեպտեմբերի համեմատությամբ	105.6	104.8	102.5	97.7

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2011*	*2012*	*2013*	*2013*	*2013*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.4 [2]	3.6	2.9	2.9	2.6
Փետրվար	0.9 [2]	-0.9	-0.4	2.5	3.1
Մարտ	0.8	0.1	0.4	2.9	3.4
Ապրիլ	-0.2	-0.6	-0.1	2.8	3.9
Մայիս	0.0	-1.3	0.0	2.8	5.2
Հունիս	-1.4	-1.3	-0.1	2.7	6.5
Հուլիս	-3.0	-1.5	0.4	3.2	8.5
Օգոստոս	-0.6	-0.4	0.3	3.5	9.3
Սեպտեմբեր	0.8	0.8	-0.2	3.2	8.2
Հոկտեմբեր	0.3	1.2			
Նոյեմբեր	1.2	1.4			
Դեկտեմբեր	2.5	2.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	4.7	3.2			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	7.7	2.6			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2013 թ. սեպտեմբերը 2013 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**99.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**99.50**	**-0.27**
Ձու	109.40	0.13
Մսամթերք	100.30	0.03
Կենդանական և բուսական յուղեր	100.60	0.02
Հրուշակեղեն	100.80	0.02
Շաքարավազ	97.80	-0.02
Հացամթերք	99.70	-0.03
Միրգ	92.70	-0.27
Բանջարեղեն և կարտոֆիլ	93.70	-0.39
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.60**	**0.09**
Հագուստ և գործվածք	102.20	0.06
Կոշկեղեն	101.10	0.02
Մշակույթի ապրանքներ	103.00	0.01
Անձնապիտո ապրանքներ	101.60	0.01
Ծառայություններ, որից՝	**99.80**	**-0.06**
Կրթության համակարգի	106.90	0.08
Կապի	99.90	-0.01
Հանգստի կազմակերպման	98.20	-0.01
Տրանսպորտի	98.50	-0.05
Իրավական և բանկային	90.00	-0.07

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2010	2011	2012	2013
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.48	0.71[4]	0.65	0.79
Փետրվար	0.74	0.42[4]	0.08	0.21
Մարտ	0.82	0.64[4]	0.04	0.53
Ապրիլ	0.70	0.45[4]	0.02	0.51
Մայիս	0.04	0.32[4]	-0.16	0.38
Հունիս	-0.22	0.37[4]	0.35	0.54
Հուլիս	-0.42	0.21[4]	0.14	0.09
Օգոստոս	0.17	0.27[4]	-0.06	0.11
Սեպտեմբեր	0.63	0.42[4]	0.67	0.28
Հոկտեմբեր	1.21	0.36[4]	0.73	
Նոյեմբեր	1.18	0.41	0.37	
Դեկտեմբեր	0.63	0.55	0.58	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	6.20	6.28[4]	5.27	3.63
Փետրվար	7.59	5.75[4]	4.91	3.73
Մարտ	7.14	5.68[4]	4.27	4.20
Ապրիլ	6.35	5.42[4]	3.81	4.71
Մայիս	5.92	5.75[4]	3.30	5.30
Հունիս	5.40	6.32[4]	3.26	5.50
Հուլիս	5.16	6.95[4]	3.19	5.49
Օգոստոս	4.96	7.01[4]	2.85	5.70
Սեպտեմբեր	4.86	7.01[4]	3.10	5.34
Հոկտեմբեր	5.53	6.09[4]	3.48	
Նոյեմբեր	6.16	5.37	3.47	
Դեկտեմբեր	6.26	5.29	3.50	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**5.34**
Ձու	0.70
Կարագ	0.32
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների, կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.25
Ալյուր բարձր տեսակի	0.18
Թռչնի միս	0.18
Ծառայություններ կենցաղային ապրանքների վարձակալության հանձնման (վարձույթի)	0.17
Հավի բուդ	0.17
Մածուն	0.17
Պանիր «Չանախ»	0.16
Ծառայություններ ատամնաբուժական, ատամների բուժման	0.16
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.14
Ծխախոտ «Գառնի»	0.13
Բջջային հեռախոսի կանխավճարային րոպեավճար	-0.12
Խոզի միս	-0.14
Շաքարավազ	-0.21

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2013 թ. հունվար – օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար – օգոստոսը 2012 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)*	*2013 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար – սեպտեմբերը 2012 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	952.2	108.9	1088.6	110.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	2704.3	100.8	3081.0	102.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1752.0	96.9	1992.4	98.6

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունվար – սեպտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1135011	177684	957327	1644850	251163	1393686
ԱՄՆ	91311	79447	11863	127681	115347	12334
Ուկրաինա	15060	14956	104	20783	21114	-331
Ղազախստան	18215	1203	17012	26427	1734	24694
Գերմանիա	19343	24099	-4756	26847	33177	-6330
Իսպանիա	5851	8233	-2383	7534	11186	-3651
Ֆրանսիա	13832	16892	-3060	19917	25268	-5351
ԱՄԷ	16806	36439	-19633	23392	53989	-30597
Չինաստան	4740	58574	-53834	7108	82770	-75662
Թուրքիա	2239	22030	-19791	3799	31221	-27421
Այլ երկրներ	237850	183901	53949	329130	235711	93420
Ընդամենը	**1560258**	**623459**	**936799**	**2237468**	**862679**	**1374789**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար-սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	164770	20188	144581	1219362	171299	1048063
ԱՄՆ	12656	10265	2391	118946	92752	26193
Ուկրաինա	1473	1777	-304	13655	15813	-2158
Ղազախստան	2123	240	1883	18310	1767	16542
Գերմանիա	2859	6895	-4036	17709	31295	-13585
Իսպանիա	584	731	-148	6518	8797	-2279
Ֆրանսիա	1823	1377	446	15015	18405	-3390
ԱՄԷ	1575	5572	-3997	25720	33933	-8214
Չինաստան	743	8617	-7874	4440	61531	-57091
Թուրքիա	191	2609	-2418	2839	21118	-18279
Այլ երկրներ	17645	16936	709	212565	150962	61604
Ընդամենը	**206442**	**75208**	**131234**	**1655080**	**607673**	**1047407**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունվար – սեպտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1013501	113845	899656	1444955	164588	1280367
ԱՄՆ	49787	18072	31715	66554	25936	40617
Ուկրաինա	13777	10756	3021	19094	15397	3698
Ղազախստան	15218	1094	14124	22532	1575	20957
Գերմանիա	7747	6062	1685	11827	7962	3866
Իսպանիա	4679	2969	1711	6315	3842	2473
Ֆրանսիա	8124	3763	4361	12089	5292	6797
ԱՄԷ	6376	4862	1514	7596	7309	287
Չինաստան	2678	7980	-5302	2967	10646	-7679
Թուրքիա	1290	2888	-1598	1615	4209	-2593
Այլ երկրներ	63403	31402	32001	91717	45493	46224
Ընդամենը	**1186580**	**203694**	**982886**	**1687263**	**292249**	**1395014**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար-սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	156604	15855	140749	1128792	129952	998840
ԱՄՆ	7424	3167	4258	58591	23389	35202
Ուկրաինա	1430	1198	232	12548	10743	1805
Ղազախստան	1927	175	1752	16284	1442	14843
Գերմանիա	2018	774	1244	10600	5790	4810
Իսպանիա	564	274	289	4608	3499	1109
Ֆրանսիա	1295	540	754	10429	4339	6090
ԱՄԷ	325	553	-228	6270	5075	1195
Չինաստան	81	1479	-1398	1062	8645	-7583
Թուրքիա	106	464	-359	1406	3182	-1776
Այլ երկրներ	7162	3944	3218	67689	35364	32325
Ընդամենը	**178934**	**28423**	**150511**	**1318280**	**231420**	**1086860**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2012	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.2	128.7	127.6	122.8	124.3	120.4	119.4	118.2	117.1	117.8	119.7	120.6
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	218.3	214.0	213.7	207.5	212.7	208.8	210.8	210.4	208.2	208.1	209.2	207.7
2013	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	122.6	121.3	120.9	120.3	120.2	121.1	127.4	129.6	128.3			
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	205.9	205.4	204.9	204.4	205.0	206.9	217.0	218.6	218.0			

[1] 2013 թ. հունվարին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2012	2013								
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [4]
Համախառն միջազգային պահուստներ	**1799.4**	**1768.0**	**1771.6**	**1631.2**	**1638.2**	**1669.7**	**1606.3**	**1749.5**	**1794.3**	**2430.6**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	31.7	31.8	21.6	1.7	13.7	34.4	34.0	74.4	65.6	6.4
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1767.7	1736.2	1749.9	1629.6	1624.5	1635.3	1572.3	1675.1	1728.7	2424.1

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2012	2013								
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**731.6**	**735.8**	**721.6**	**679.6**	**687.3**	**671.1**	**676.2**	**724.8**	**717.4**	**691.2**
ԱՄՀ վարկ	464.3	466.0	454.5	415.3	416.9	402.4	408.5	451.6	444.1	414.5
ՀՓԻ տեղաբաշխում	135.2	135.6	134.8	131.9	132.8	131.9	132.3	133.2	133.3	135.0
Այլ վարկեր	131.8	134.1	132.2	132.1	136.8	136.3	134.8	139.7	139.6	141.4
Այլ պարտավորություններ	0.3	0.1	0.1	0.2	0.8	0.5	0.6	0.4	0.4	0.4


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Վերջնաժամկետ պարտատոմսեր	Ընդամենը	Ի վերջին հաշվետվական ամսաթվի դրությամբ կենտրոնական գործակալների ընթացիկ հաշիվներ	Վերջին հաշվետվական ամսաթվի դրությամբ կենտրոնական գործակալների ժամկետային ավանդներ	ՀՀ-ԳՀ-երի միջոցներ հետգնման պայմանագրերով	ՀՀ-ԳՀ-ի վերաֆինանսավորման միջոցներ	Ընդամենը	
2012								
Դեկտեմբեր	15940	15940	106563	2146	1	572	109283	**-93342**
2013								
Հունվար	15784	15784	143768	2195	0	577	146540	**-130755**
Փետրվար	14383	14383	133612	2161	0	580	136353	**-121970**
Մարտ	12888	12888	114893	1894	0	594	117381	**-104493**
Ապրիլ	12818	12818	115478	1775	0	583	117836	**-105018**
Մայիս	13378	13378	111394	1556	0	592	113541	**-100163**
Հունիս	13148	13148	112382	1321	0	581	114284	**-101136**
Հուլիս	13366	13366	116876	1160	0	581	118617	**-105251**
Օգոստոս	13035	13035	130133	4809	0	576	135519	**-122483**
Սեպտեմբեր	12782	12782	134183	284110	0	575	418868	**-406086**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M1** [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2** [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Արտարժութային ավանդներ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2X** [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Փողի բազայի վրա** [5]	**Դրամային բազմապատկիչ** [6]
2012										
Դեկտեմբեր	683846	384065	161727	545793	192190	737983	608382	1346365	1.97	1.23
2013										
Հունվար	655927	351781	156998	508779	200378	709158	610987	1320145	2.01	1.22
Փետրվար	679554	342222	168718	510940	202542	713481	633431	1346912	1.98	1.22
Մարտ	645019	344020	158137	502157	211289	713445	650421	1363867	2.11	1.27
Ապրիլ	679618	346048	166212	512260	215608	727868	640145	1368013	2.01	1.22
Մայիս	714781	353291	159824	513115	214635	727751	656506	1384256	1.94	1.22
Հունիս	659174	351789	162354	514143	217085	731228	651890	1383118	2.10	1.32
Հուլիս	724935	365148	164740	529889	219027	748915	663298	1412213	1.95	1.28
Օգոստոս	733149	359178	166306	525484	220948	746433	679250	1425683	1.94	1.26
Սեպտեմբեր	722587	355298	180857	536155	224084	760239	697684	1457923	2.02	1.28

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
800000
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
09
10
11
12
13
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1500000
1200000
900000
600000
300000
0
09
10
11
12
13
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
20
06
07
08
09
10
11
12
13


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
70
65
60
55
50
45
06
07
08
09
10
11
12
13


ՄԵՋՈՒՄՅՈՒՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2012					
Դեկտեմբեր	617342	360707	512404	705716	1305151
2013					
Հունվար	662640	362484	517741	718184	1318291
Փետրվար	614118	360681	512785	704347	1303694
Մարտ	669943	359772	520405	722906	1364359
Ապրիլ	672394	354607	531004	743913	1386781
Մայիս	725593	359614	528332	737374	1396309
Հունիս	689953	357508	524823	744116	1391933
Հուլիս	723304	358177	522660	743558	1406640
Օգոստոս	728170	354164	523278	747108	1423126
Սեպտեմբեր	722178	352060	529503	758688	1456546

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2012	2013								
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***418075***	***403117***	***418057***	***380025***	***379304***	***399430***	***369999***	***406965***	***427061***	***678981***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***265771***	***252810***	***261498***	***264993***	***300314***	***315352***	***289175***	***317970***	***306088***	***43606***
Կառավարություն	-93342	-130755	-121970	-104493	-105018	-100163	-101136	-105251	-122483	-406086
Բանկեր	152943	175166	168021	153065	187425	182925	158492	190076	194722	201189
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	71582	69550	61442	66577	81609	81555	79111	95518	99803	104599
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-25009	0	0	-21004	0	0	-23004	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	206170	208398	215447	216422	217906	232589	231819	233145	233850	248503
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***683846***	***655927***	***679554***	***645019***	***679618***	***714781***	***659174***	***724935***	***733149***	***722587***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	440117	400669	397751	395633	399356	404296	404169	415274	410579	408091
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	154525	175808	183424	161970	193685	190018	147631	166754	181203	181914
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	86033	73547	93138	84366	82950	116352	104552	139629	138670	128470
Այլ հաշիվներ	3171	5903	5241	3050	3626	4116	2822	3278	2697	4111
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	3162	5900	5218	3047	3599	4033	2809	3263	2694	4109
Այլ հաշիվներ արտարժույթով	9	3	23	3	27	83	13	15	3	3
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-14958***	***14939***	***-38031***	***-721***	***20126***	***-29431***	***36966***	***20095***	***251920***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-12961***	***8688***	***3496***	***35320***	***15038***	***-26177***	***28795***	***-11881***	***-262483***
Կառավարություն	-	-37413	8785	17478	-525	4855	-973	-4116	-17232	-283603
Բանկեր	-	22223	-7145	-14957	34361	-4500	-24433	31584	4646	6467
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-2032	-8108	5135	15031	-54	-2444	16407	4285	4797
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-25009	0	21004	-21004	0	23004	-23004	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2229	7048	975	1485	14683	-771	1326	705	14654
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-27919***	***23628***	***-34536***	***34599***	***35164***	***-55608***	***65762***	***8214***	***-10562***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-39448	-2918	-2119	3723	4940	-127	11105	-4695	-2488
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	21283	7616	-21454	31715	-3668	-42387	19124	14448	712
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-12486	19591	-8771	-1416	33402	-11800	35077	-959	-10200
